ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մարտի 2024 թվականի №-Ա

«ՄՈԼԲԵՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ-1» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0568 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի դեկտեմբերի 3-ի №448Ա որոշմամբ «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական տարածքում՝ Ձորագետ գետի Զքնաղ վտակի վրա (բնական ջրահոսք), «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0568 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0568 լիցենզիա)՝ մինչև 2034 թվականի հոկտեմբերի 15-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2025 թվականի ապրիլի 15-ը,

բ) Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի №427Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) տասնվեց ամիս ժամկետով երկարաձգվել է ԼԷ №0568 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում՝ մինչև 2024 թվականի հունվարի 31-ը, Հանձնաժողով ներկայացնել 2 402 500 (երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2025 թվականի մայիսի 30-ը գործողության ժամկետով, որն Ընկերությունը չի ներկայացրել,

գ) Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 1-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը

ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 1-ի №ԳԲ/34.1-Մ2-4/400-2024 գրությամբ,

դ) Ընկերությունը սույն թվականի փետրվարի 7-ին Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանում, համաձայն որի՝ Ընկերության կողմից պարտավորության չկատարելը պայմանավորված է միակ բաժնետեր Արթուր Մանուկյանի առողջական խնդիրների պատճառով արտերկրում գտնվելու և վերջինիս վերադարձն անորոշ ժամկետով հետաձգվելու հետ, որի պատճառով բանկային երաշխիք ստանալու վերաբերյալ Ընկերությունը ժողով չի կայացրել,

ե) «Էներգետկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է կասեցվել հանձնաժողովի հաստատած կարգին համապատասխան երաշխիք չներկայացնելու դեպքում,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը Հանձնաժողով չի ներկայացրել, իսկ Ընկերության փաստարկները բավարար չեն նշված երաշխիքը չներկայացնելու դեպքում օրենքով սահմանված պահանջը չկիրառելու համար, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը Հանձնաժողով չներկայացնելու համար կասեցնել ԼԷ №0568 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--մարտի 2024թ.